

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հովհաննես Ռուբենի Մելքոնյանը հայ գրող է, դրամատուրգ, արձակագիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1969): Ծնվել է 1937 թ. փետրվարի 27-ին ներկայիս Շիրակի մարզի Անիպեմզա գյուղում:

1955 թվականին ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) Ղազարոս Աղայանի անվան թիվ 19 դպրոցը, 1960 թվականին՝ Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է մամուլում, եղել է «Ավանգարդ» թերթի խմբագրության բաժնի վարիչ, 1965-1968 թթ.՝ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի բաժնի վարիչ, պատասխանատու քարտուղար, 1972-1974 թթ.՝ «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ: Աշխատել է «Գրքերի աշխարհ»-ի, «Գրական թերթ»-ի խմբագրություններում, «Սովետական գրող» հրատարակչությունում, հեռուստատեսային ֆիլմերի «Երևան» ստուդիայում: 1968 թվականից եղել է Հայաստանի գրողների միության անդամ, 1988 թվականից՝ առաջին քարտուղար, 1996 թվականից՝ Հայ գրողների միության նախագահ, 2003 թվականից՝ Գրողների միությունների միջազգային կազմակերպության անդամ:

Գրել է պատմվածքներ, վիպակներ, պիեսներ, կատարել թարգմանություններ: Առաջին գիրքը՝ «Քարավան» (1971), վիպակների ժողովածու է: Այնուհետև հրատարակվել են Մեքոնյանի հետևյալ գրքերը՝ «Հեռավոր հողի ձայնը» (1973), «Հարցաքննություն» (1977), «Մոր ձայ-

նը» (1980), «Հիշողության դաշտ» (1987), «Պատերազմի ծուխը» (1988), «Աքսորյալի հուշամատյան» (1992), «Ոճիրի բուրգեր» (2001), «Մերժված օրենսդիրը» (2006):

Մելքոնյանի ստեղծագործության առանցքում Հայոց մեծ եղեռնի, ԽՍՀՄ հայրենական պատերազմի, ժամանակակից մարդու ճակատագրի թեմաներն են: Նրա երկերին բնորոշ է բարու և ճշմարիտի որոնումը, հրապարակախոսական շեշտադրումներով հագեցած խոսքով պայքարում է չարի ու կեղծիքի դեմ: Գրել է նաև պիեսներ՝ «Հայր Տոնապետի մենախոսությունը» (համահեղինակ՝ Գ. Չալիկյան), «Հրաժարական»: Մելքոնյանի սցենարով 1979 թվականին նկարահանվել է «Խոնարհվիր վաղվա օրվան» գեղարվեստական կինոնկարը: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են ԽՍՀՄ և այլ ժողովուրդների լեզուներով: Ստեղծագործական թեմաներն են հետպատերազմյան և ժամանակակից կյանքը:

2009 թվականի դեկտեմբերի 6-ին ավտովթարի զոհ է դարձել: 2014 թվականին Գյումրիի Պիոներական փողոցը վերանվանվել է Հովհաննես Մելքոնյանի անունով: